

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական
խորհրդի 24/06/2020թ. թիվ
143 նիստում



Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՓՈԽԿԱՂԱԿՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

Ընդհանուր դրույթներ

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ի գիտական և կրթական գործընթացների փոխկապակցվածությունը բխում է Կենտրոնի առաքելությունից, ռազմավարական նպատակներից ու հետազոտության ռազմավարությունից:

Գիտական և հետազոտական աշխատանքը ԳԿՄԿ-ի գործունեության կարևորագույն բաղկացուցիչն է է, որը փոխկապակցված է կրթական գործունեության հետ: Այն ուղղված է ԳԿՄԿ-ում նոր ֆունդամենտալ գիտելիքների ստացմանը, կիրառական խնդիրների նորովի լուծումների որոնմանը, բարձրակարգ գիտամանկավարժական կադրերի պատրաստմանը, նոր արդյունքների ներդրմանը ուսումնական գործընթացում:

ՆՊԱՏԱԿԸ

Ուսումնառողների շրջանում գիտահետազոտական ու ստեղծագործական միջավայրի ապահովում ու զարգացում:

Ուսումնառողներին բացի մասնագիտական գիտելիքներից հետազոտական կարողությունների և վերաբերյալ գործնական հմտությունների մատուցումն ու ամրակայումն է:

Ուսումնական և հետազոտության գործընթացների շաղկապման միջոցով նոր գիտելիքների ստացման մեխանիզմների, մասնագիտական գործունեության տարբեր ոլորտներում վերջինիս կիրառելիության և ներդրման ապահովումն է:

Ուսումնառողների շրջանում հետազոտական հմտությունների ու կարողությունների, ստեղծագործական ունակությունների զարգացումն է:

Ուսումնառողների տեսական գիտելիքների հետազոտական ոլորտում ընդլայնում և խորացումն է:

Ուսումնառողների շրջանում հետազոտության տարբեր օբյեկտների, սկզբունքների և եղանակների ճանաչման համակարգված մեթոդաբանության ձևավորումն է:

Ուսումնառողների մոտ սեփական գիտական հետազոտությունների արդյունքների ներկայացման կարողության (հաշվետվությունների, պրեզենտացիաների, գիտական հոդվածների և այլն պատրաստում) զարգացումն է:

Ուսումնառողների շրջանում գիտական հետազոտությունների իրականացման և ստացված արդյունքների մշակման ուղղությամբ տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման հմտությունների զարգացումն է:

ՓՈԽԿԱՊԱԿՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

ԳԿՄԿ-ում ուսումնառողների հետազոտական գործունեության զարգացման, խթանման, արդյունքների ներկայացման նպատակով՝ ներբուհական մրցույթների, օլիմպիադաների, ուսանողական գիտական կոնֆերանսների և սեմինարների կազմակերպում, ուսանողական գիտական հոդվածների ժողովածուի պատրաստում ու տպագրում:

ԳԿՄԿ ուսումնառողների մասնակցության ապահովում գիտական, գիտատեխնիկական, ինովացիոն տեղական և միջազգային ծրագրերին:

ԳԿՄԿ-ի և միջազգային առաջատար գիտակրթական կենտրոնների հետ հետազոտական ծրագրերի համագործակցային զարգացումն ապահովում՝ պրոֆեսորադասախոսական համակազմի հետ միասին ներգրավելով մագիստրանտներին:

ԳԿՄԿ-ում ուսումնական և գիտական գործընթացների միասնությունը ապահովում ՀՀ ԳԱԱ գիտական ինստիտուտների հենքի վրա և տվյալ տարածությամբ տեղակայված մասնագիտական ամբիոնների առկայությունը:

ՀՀ ԳԱԱ գիտական ինստիտուտներում տեղակայված մասնագիտական լաբորատորիաների ու անհրաժեշտ նյութատեխնիկական ռեսուրսի հասանելիությունը ինստիտուտներում տեղակայված մասնագիտական ամբիոններին ու ուսանողական համակազմին , այդ հենքի վրա մասնագիտական ամբիոնների ուսումնական և գիտահետազոտական գործունեությունը:

ՀՀ ԳԱԱ գիտական ինստիտուտներում տեղակայված ամբիոններում տվյալ բնագավառի գիտության առաջատար գիտնականների, հետազոտողների ներգրավվածությունը՝ իբրև պրոֆեսորադասախոսական համակազմ, ինստիտուտների բազային հետազոտական աշխատանքներում ԳԿՄԿ-ի մագիստրանտներին ներգրավման սկզբունքը:

Ուսումնական գործընթացում ՀՀ ԳԱԱ գիտական ինստիտուտների գիտնական-հետազոտողների հետազոտությունների արդյունքների անմիջականորեն ներկայացումը, քննարկումներն ու գործնական կիրառելիությունը:

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ մասնագիտական ամբիոններում մագիստրոսական գիտական թեզերի բովանդակային առումով ներառվածությունը ամբիոնային հետազոտական գիտական թեմային որոնք համալրում ու լրացնում են ամբիոնային հետազոտության բաղադրատարրերը:

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ մագիստրանտներին, ասպիրանտներին ու հայցորդներն ընձեռնած հնարավորությունը՝ իրենց գիտական ղեկավարի կամ դասավանդող պրոֆեսորադասախոսական համակազմից մասնագետի հետ կատարած հետազոտության արդյունքներով հանդես գալ գիտաժողովներում զեկույցներով, տպագրելու հիմնական դրույթները և արդյունքները վավերացնելու գիտական պարբերականներում: